# Los Angeles County HOUSEHOLD RELIEF GRANT

Վերանայում՝ 03/03/25

Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհը ծրագիր է՝ ներկայացված Լոս Անջելես վարչաշրջանի սպառողների և բիզնեսի հարցերով վարչության կամ «DCBA»-ի (Department of Consumer and Business Affairs) կողմից՝ դրա ադմինիստրատորի՝ Ռազմավարական տնտեսական հետազոտությունների և ինստիտուցիոնալ զարգացման կենտրոնի (The Center for Strategic Economic Studies and Institutional Development, Inc.) («Ադմինիստրատոր») միջոցով։

# Կարևոր նշումներ սկսելուց առաջ

Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհը («Ծրագիր») ծրագիր է՝ ներկայացված Լոս Անջելես վարչաշրջանի սպառողների և բիզնեսի հարցերով վարչության կամ «DCBA»-ի (Department of Consumer and Business Affairs) կողմից՝ դրա ադմինիստրատորի՝ Ռազմավարական տնտեսական հետազոտությունների և ինստիտուցիոնալ զարգացման կենտրոնի (The Center for Strategic Economic Studies and Institutional Development, Inc.) («Ադմինիստրատոր») միջոցով:

Ադմինիստրատորը կառավարում է Ծրագիրը DCBA-ի անունից և կարող է օգտվել երրորդ կողմի ծառայություններ տրամադրողներից, այդ թվում՝ B.S.D. Capital, Inc. dba Lendistry-ից («Lendistry»)՝ այս Ծրագրի հատուկ տարրերը կատարելու համար: Ո՛չ Ադմինիստրատորը, ո՛չ դրա երրորդ կողմի ծառայություններ տրամադրողները չեն որոշում Ծրագրի շրջանակը, իրավասության չափանիշները, հաղորդակցման ռազմավարությունը կամ ժամկետները. ծրագրի բոլոր պահանջները սահմանվում են DCBA-ի կողմից:

Տրամադրված տեղեկատու նյութերում նշված տեղեկատվությունը ենթակա է փոփոխման:

Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորումը սահմանափակ է: Հնարավոր է, որ իրավասության պահանջները բավարարող հայտատուների թիվը գերազանցի հասանելի միջոցները: Դիմում ներկայացնելը, իրավունակության պահանջները բավարարելը և/կամ հաստատման ստացումը չի երաշխավորում, որ դուք կստանաք ֆինանսավորում:

Այս դրամաշնորհը նախատեսված է անհապաղ և ժամանակավոր օգնություն տրամադրելու համար և, որպես այդպիսին, սովորաբար **չի կարող համարվել հարկվող եկամուտ** և, **ամենայն հավանականությամբ, չի ազդի պետական նպաստներ ստանալու իրավասության վրա**: Սակայն անհատական հանգամանքները կարող են տարբեր լինել: Ստացողները պետք է խորհրդակցեն **հարկային մասնագետի** կամ իրենց **նպաստներ տրամադրողի** հետ՝ հասկանալու իրենց իրավիճակին հատուկ հնարավոր հետևանքները: Լոս Անջելես վարչաշրջանը և դրա գործընկերները պատասխանատվություն չեն կրում այս դրամաշնորհի ընդունումից բխող հարկերի կամ նպաստների վրա որևէ ազդեցության համար:

# Ծրագրի համառոտ նկարագրություն

**Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհը** ձգտում է տրամադրել անհապաղ ֆինանսական օգնություն տուժած տնային տնտեսություններին՝ օգնելով կամրջել ֆինանսական բացերը և նպաստել տուժած անհատների ընտանիքների ընդհանուր բարեկեցությանը՝ մինչև ապահովագրության կամ պետականվերականգնման ռեսուրսների հասանելի դառնալը:

## Դիմումների ներկայացման ժամանակաշրջան

- Դիմումների ներկայացման ժամանակաշրջանը սկսվում է՝ 2025 թվականի փետրվարի 26, 9:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով
- Դիմումների ներկայացման ժամանակաշրջանն ավարտվում է՝ 2025 թվականի մարտի 12, 17:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով

Դուք պետք է ներկայացնեք ձեր դիմումը մինչև **2025 թվականի մարտի 12-ը, ժ. 17:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով**: Մինչև վերջնաժամկետը թերի լրացված կամ չներկայացված դիմումները՝ ներառյալ պահանջվող փաստաթղթերը, **չեն** դիտարկվի դրամաշնորհի համար:

## Ով կարող է դիմել

Դուք կարող եք իրավասու լինել, եթե Լոս Անջելես վարչաշրջանի բնակիչ եք (տանտեր կամ վարձակալ), ով ֆիզիկապես տեղահանվել է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների պատճառով և համապատասխանում է հետևյալ չափանիշներից որևէ մեկին.

- Ձեր հիմնական բնակության վայրն ամբողջությամբ ավերվել է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների հետևանքով:
- Ձեր հիմնական բնակության վայրը գտնվում է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհներից և փոթորիկներից տուժած գոտիներում և դրա հետևանքով մասամբ ավերվել կամ լուրջ վնասվել է՝ այն դարձնելով անբնակելի:
- Ձեր տնային տնտեսությունում տեղի է ունեցել մահվան դեպք 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների պատճառով:

Առաջնահերթությունը կտրվի առավել տուժած տնային տնտեսություններին՝ ելնելով կարիքից, այդ թվում՝ ապահովագրական կարգավիճակից, սոցիալական և տնտեսական խոցելիությունից, կյանքի կորստից, առողջական վիճակից և այլ ռիսկային գործոններից:

**Իթոն. Սեղմեք այստեղ՝ տեսնելու համար՝ արդյոք ձեր հիմնական բնակության վայրը տուժել է:**

**Փալիսեյդս. Սեղմեք այստեղ՝ տեսնելու համար՝ արդյոք ձեր հիմնական բնակության վայրը տուժել է**

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Ծրագրի համառոտ նկարագրություն

## Դրամաշնորհի գումարները

Իրավասու տնային տնտեսությունները* կարող են ստանալ 6,000, 12,000 կամ 18,000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհներ՝ կախված տնային տնտեսության չափից և կազմից:

**Երկու (2) կամ ավելի քիչ անդամից բաղկացած տնային տնտեսություն (6,000 ԱՄՆ դոլար)**
Տնային տնտեսություն, որը բաղկացած է մեկ (1) կամ երկու (2) անդամից՝ ներառյալ առանձին ապրող անձինք կամ առանց խնամարկյալների զույգեր:

**Երեք (3) կամ ավելի անդամից բաղկացած տնային տնտեսություն (12,000 ԱՄՆ դոլար)**
Առնվազն երեք (3) անդամով տնային տնտեսություններ, որտեղ առնվազն մեկ (1) անձ խնամարկյալ անչափահաս է կամ խնամարկյալ չափահաս:

**Բազմասերունդ տնային տնտեսություն (18,000 ԱՄՆ դոլար)**
Առնվազն չորս (4) անդամով տնային տնտեսություններ, որոնք ներառում են խնամարկյալ անչափահասներ և/կամ խնամարկյալ չափահասներ և բաղկացած են առնվազն երեք (3) առանձին սերնդից:

*Այս ծրագրով տնային տնտեսությունը սահմանվում է որպես «բոլոր այն մարդիկ, ովքեր զբաղեցնում են բնակարանային միավոր (օրինակ՝ տուն կամ բնակարան), որպես իրենց սովորական բնակության վայր»:

*Այս ծրագրով տնային տնտեսությունը սահմանվում է որպես «բոլոր այն մարդիկ, ովքեր զբաղեցնում են բնակարանային միավոր (օրինակ՝ տուն կամ բնակարան), որպես իրենց սովորական բնակության վայր»:

**Խնդրում ենք հաշվի առնել.** ***Յուրաքանչյուր հասցեին միայն մեկ դրամաշնորհ կշնորհվի: Օգնության միջոցների առավելագույն գումարը, որը տուժած հասցեն կարող է ստանալ այս Ծրագրից, կազմում է 18,000 ԱՄՆ դոլար:***

## Միջոցների օգտագործում

Դրամաշնորհային միջոցները կարող են օգտագործվել միայն **վերականգնման չբավարարված կարիքների** հետ կապված ծախսերի և/կամ այն ծախքերի համար, որոնք բխում են 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնում և Փասիֆիք Փալիսեյդսում տեղի ունեցած հրդեհներից և փոթորիկներից և **չեն փոխհատուցվում աջակցության այլ ձևերով**:

**Նշում**
Այս դրամաշնորհը ձգտում է կամրջել ֆինանսական բացերը և նպաստել տուժած տնային տնտեսությունների ընդհանուր բարեկեցությանը՝ մինչև ապահովագրության կամ պետականվերականգնման ռեսուրսների հասանելի դառնալը: Այս Ծրագրից ստացված միջոցները չեն կարող օգտագործվել նույն ծախսերի մասով, որոնք ծածկվում են այլ օգնությամբ՝ ներառյալ, առանց սահմանափակման, FEMA-ի օժանդակությունը, ապահովագրությունը կամ օգնության այլ ծրագրեր: Հարցերի դեպքում, թե ինչպես այս դրամաշնորհը կարող է ազդել այլ օգնության վրա, դիմեք FEMA-ին, իրավաբանական օգնության կամ հարկային մասնագետի:

# Պահանջվող փաստաթղթեր

## Պահանջվող փաստաթղթեր

Հայտատուին անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը (տե՛ս 33-րդ էջը տեղեկության համար)՝ օգնության դիմումը լրացնելու համար։ Այս ցանկում նշված են առաջնային և այլընտրանքային փաստաթղթերը (եթե առաջնային փաստաթղթերը հասանելի չեն)։

1. **Հայտատուի հավաստագրեր**
   - Սա պարտադիր փաստաթուղթ է բոլոր հայտատուների համար։

2. **Բնակության վայրի ապացույց**
   - Առաջնային փաստաթղթեր
     - Վերջերս ներկայացված անձնական դաշնային հարկային հայտարարագիր (չփոփոխված)՝ 2022 թ., 2023 թ. կամ 2024 թ.
   - Այլընտրանքային փաստաթղթեր
     - Կոմունալ վճարումներ (կոյուղի/գազ/էլեկտրականություն/ջուր և այլն)
     - Տրանսպորտային միջոցի գրանցում
     - Վարձակալության/լիզինգի համաձայնագիր

3. **Ինքնության ապացույց**
   - Առաջնային փաստաթղթեր
     - Վավերական վարորդական վկայական
   - Այլընտրանքային փաստաթղթեր
     - Ազգային ID
     - Անձնագիր
     - Մունիցիպալ ID
     - Անձնագրային քարտ
     - Մշտական բնակության քարտ
     - Ճամփորդական փաստաթուղթ
     - Վիզա/աշխատանքի թույլտվություն
     - Ցեղային ID

***Շարունակությունը՝ հաջորդ էջում։***

# Պահանջվող փաստաթղթեր

**4. Տնային տնտեսության չափի ապացույց**

- Առաջնային փաստաթղթեր
  - Վերջերս ներկայացված անձնական դաշնային հարկային հայտարարագիր (չփոփոխված)՝ 2022 թ., 2023 թ. կամ 2024 թ.
- Այլընտրանքային փաստաթղթեր
  - Լիզինգի համաձայնագիր, որտեղ նշված են տնային տնտեսության բոլոր անդամները
  - Երեխաների համար դպրոցում գրանցման գրառումներ
  - Հանրային նպաստների փաստաթղթեր (SNAP, TANF և այլն), որոնք ցույց են տալիս տնային տնտեսությունների չափը
  - Ընթացիկ տան սեփականատիրոջ/վարձակալի ապահովագրական պոլիսը, որտեղ նշված են տնային տնտեսության անդամները
  - FEMA գրանցում, որում ցուցադրված են տնային տնտեսության անդամները
  - Կարմիր խաչի կամ աղետներին օգնություն ցուցաբերող այլ կազմակերպության գրանցում
  - Տարհանման կենտրոնի կամ ժամանակավոր տեղավորման փաստաթղթեր
  - Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղետների ժամանակ աջակցության գրանցում
  - **Երեխաների համար.**
    - Ծննդյան վկայականներ
    - Դպրոցի գրառումներ
    - Դատական փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս խնամակալություն/հոգաբարձություն
    - Երեխայի խնամքի գրառումներ

- **Հատուկ հանգամանքներ.** Եթե տնային տնտեսության չափը փոխվել է և արտացոլված չէ հայտատուի փաստաթղթերում։
  - Տնային տնտեսության վերջերս փոփոխված չափ.
    - Ամուսնության վկայականներ
    - Ամուսնալուծության մասին հրամանագրեր
    - Խնամակալության համաձայնագրեր
    - Ծննդյան վկայականներ
    - Իրավական հոգաբարձության թղթեր
    - Տարեցների խնամք



Los Angeles County
HOUSEHOLD RELIEF GRANT

# Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերը

the Center by Lendistry

# Հայտատուի հավաստագրեր

Որպես դիմումի գործընթացի մաս՝ ձեզանից **կպահանջվի** ձեր դիմումի մեջ և օժանդակ փաստաթղթերում հաստատել ձեր տրամադրած տեղեկատվության ճշմարտացիությունն ու ճշգրտությունը՝ ստորագրելով **Հայտատուի հավաստագրերը**:

Հայտատուի հավաստագրերը հասանելի կլինեն էլեկտրոնային ձևով, որպեսզի դուք դրանք ներբեռնեք և լրացնեք: **Հայտատուի հավաստագրերի ստորագրած պատճենը պարտադիր փաստաթուղթ է այս Ծրագրի համար և պետք է վերբեռնվի Դիմումների պորտալում որպես PDF ֆայլ**:

Ներբեռնեք Հայտատուի հավաստագրերը և պահպանեք ֆայլը ձեր սարքում: Դուք կարող եք լրացնել Հայտատուի հավաստագրերը էլեկտրոնային եղանակով կամ տպել ֆայլը և ձեռքով լրացնել:

**ՍԵՂՄԵՔ ԱՅՍՏԵՂ՝ Հայտատուի հավաստագրերը ներբեռնելու համար**

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերն էլեկտրոնային եղանակով

## Քայլ 1

Սեղմեք ներբեռնման պատկերակը՝ ներբեռնելու Հայտատուի հավաստագրերը և պահպանելու ֆայլը ձեր սարքում:






## Քայլ 2

Գտեք Հայտատուի հավաստագրերը ձեր սարքում և բացեք ֆայլը: Հայտատուի հավաստագրերը կբացվեն որպես PDF ֆայլ:




## Քայլ 3

Լրացրեք Հայտատուի հավաստագրերը՝ մուտքագրելով ձեր անվան սկզբնատառերը համարակալված նիշերի կողքին և ավելացրեք ձեր ստորագրությունը վերջին էջում:



## Քայլ 4

Հայտատուի հավաստագրերը լրացնելուց հետո **կրկին պահպանեք ֆայլը**՝ անցնելով **Ֆայլ > Պահպանել** կամ ստեղնաշարի վրա սեղմելով **CTRL+S**:

## Քայլ 5

Վերբեռնեք Հայտատուի լրացված հավաստագրերը Դիմումների պորտալում որպես PDF ֆայլ:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերը ձեռքով

## Քայլ 1

Տպեք Հայտատուի հավաստագրերը՝ սեղմելով տպիչի պատկերակը, որն ընդգծված է կարմիր վանդակում ստորև:




## Քայլ 2

Լրացրեք Հայտատուի հավաստագրերը ընթեռնելի ձեռնագրով՝ մուգ գույնի գրիչով:

## Քայլ 3

Սկանավորեք լրացված Հայտատուի հավաստագրերը և պահպանեք ֆայլը ձեր սարքում PDF ձևաչափով:

## Քայլ 4

Վերբեռնեք Հայտատուի լրացված հավաստագրերը Դիմումների պորտալում որպես PDF ֆայլ:



Los Angeles County
HOUSEHOLD RELIEF GRANT

# Դիմումը ներկայացնելու խորհուրդներ

# Խորհուրդ #1. Օգտվեք Google Chrome-ից

Լավ աշխատանքի համար օգտվեք Google Chrome-ից դիմումի ներկայացման ամբողջ գործընթացի ընթացքում:

Այլ վեբ զննիչներ կարող են չաջակցել մեր միջերեսը և սխալներ թույլ տալ ձեր դիմումում:

Եթե դուք չունեք Google Chrome ձեր սարքում, կարող եք այն անվճար ներբեռնել այստեղից՝ https://www.google.com/chrome/:

Նախքան դիմումին անցնելը՝ խնդրում ենք կատարել հետևյալ գործողությունները Google Chrome-ում.

1. **Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը**
2. **Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը**
3. **Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչները**

**Մաքրեք ձեր քեշ հիշողությունը**

Քեշ հիշողության մեջ պարունակվող տվյալներն այն տեղեկություններն են, որոնք պահպանվել են վեբկայքից կամ հավելվածից և հիմնականում օգտագործվում են զննման գործընթացն ավելի արագ դարձնելու համար՝ տեղեկություններն ավտոմատ կերպով լրացնելով: Սակայն, քեշ հիշողության մեջ պարունակվող տվյալները կարող են ներառել նաև հնացած տեղեկություններ, օրինակ՝ հին գաղտնաբառեր կամ նախկինում սխալ մուտքագրված տեղեկություններ: Սա կարող է սխալների առաջացման պատճառ դառնալ ձեր դիմումում և կարող է հանգեցնել նրան, որ դիմումը հնարավոր խարդախության կասկած հարուցի:

**Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը**

Ինկոգնիտո ռեժիմը թույլ է տալիս գաղտնի մուտքագրել ինֆորմացիան և թույլ չի տալիս, որպեսզի ձեր ինֆորմացիան հիշվի կամ պահպանվի քեշ հիշողությունում:

**Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը**

Մեր հավելվածը ներառում է բազմաթիվ բացվող հաղորդագրություններ՝ տեղեկատվություն հավաքելու համար: Այս հաղորդագրությունները տեսնելու համար դուք պետք է ապաակտիվացնեք բացվող պատուհանների արգելափակիչը Google Chrome-ում:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Ինչպես մաքրել քեշ հիշողությունը

## Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը և անցեք «**Կարգավորումներ**»:




## Քայլ 2

Անցեք «**Գաղտնիություն և անվտանգություն**», այնուհետև ընտրեք «**Մաքրել զննարկման տվյալները**»:




## Քայլ 3

Ընտրեք «**Մաքրել տվյալները**»:




*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես օգտագործել ինկոգնիտո ռեժիմը

## Քայլ 1

Սեղմեք ձեր վեբ զննիչի վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը, այնուհետև ընտրեք «**Նոր ինկոգնիտո պատուհան**»:




## Քայլ 2

Ձեր զննարկիչը կբացի Google Chrome-ի նոր պատուհան: Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը՝ դիմումի լրացման ամբողջ գործընթացում:




***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհը ծրագիր է՝ ներկայացված Լոս Անջելես վարչաշրջանի սպառողների և բիզնեսի հարցերով վարչության կամ «DCBA»-ի (Department of Consumer and Business Affairs) կողմից՝ դրա ադմինիստրատորի՝ Ռազմավարական տնտեսական հետազոտությունների և ինստիտուցիոնալ զարգացման կենտրոնի (The Center for Strategic Economic Studies and Institutional Development, Inc.) («Ադմինիստրատոր») միջոցով:

# Ինչպես ապաակտիվացնել բացվող պատուհանների արգելափակիչը

## Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը և անցեք «**Կարգավորումներ**»:




## Քայլ 2

Անցեք «**Գաղտնիություն և անվտանգություն**», այնուհետև ընտրեք «**Կայքի կարգավորումներ**»:




## Քայլ 3

Ընտրեք «**Բացվող պատուհաններ և վերահղումներ**»: Սեղմեք կոճակը, որպեսզի այն կապույտ դառնա, և կարգավիճակը «**Արգելափակվածից**» դառնա «**Թույլատրված**»:






# Խորհուրդ #2. Ձեր փաստաթղթերը ներկայացրեք PDF ձևաչափով

**Պահանջվող բոլոր փաստաթղթերը հարկավոր է վերբեռնել Պորտալում միայն PDF ձևաչափով:**

Վերբեռնելիս փաստաթղթերը պետք է լինեն պարզ, ուղիղ դիրքով և չպարունակեն խանգարող հետնապատկերներ:

Կարևոր նշումներ՝ կապված փաստաթղթերի վերբեռնման հետ.

1. Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն PDF ձևաչափով:
2. Ֆայլի չափը պետք է լինի 15 ՄԲ-ից փոքր:
3. Ֆայլի անվան մեջ ՉԻ ԿԱՐՈՂ լինել որևէ հատուկ նիշ (!@#$%^&*()_+):
4. Եթե ձեր ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով, դուք պետք է մուտքագրեք այն:

**Չունե՞ք սկաներ:**
Խորհուրդ ենք տալիս ներբեռնել և օգտվել սկանավորման անվճար բջջային հավելվածից:

**Genius Scan**
Apple | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար
Android | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար

**Adobe Scan**
Apple | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար
Android | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար

# Խորհուրդ #3. Նշեք վավեր էլփոստի հասցե

**Համոզվեք, որ վավեր էլփոստի հասցե եք նշել, և որ այն ճիշտ է գրված դիմումում:**

- Ձեր դիմումի հետ կապված թարմացումները և լրացուցիչ ուղեցույցները կուղարկվեն ձեր տրամադրած էլփոստի հասցեին:
- Էլփոստի որոշ հասցեներ չեն կարող ճանաչվել Դիմումների պորտալում և կարող են հանգեցնել ձեր դիմումի հետ կապված հաղորդակցության ուշացումների: Անվավեր էլփոստի հասցեների օրինակների համար տե՛ս աջ կողմում գտնվող ցանկը:

**Եթե ձեր դիմումում նշել եք սխալ կամ անվավեր էլփոստի հասցե, կապ հաստատեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ 888-788-0335 հեռախոսահամարով՝ ձեր տվյալները թարմացնելու համար:**

Մեր աշխատանքային ժամերն են.

- Շաբաթը յոթ (7) օր, 7:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով - 19:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով
(միայն 2025 թվականի փետրվարի 26-ից մարտի 12-ը)
- Երկուշաբթի – ուրբաթ 8:00 - 17:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով
(սկսած 2025 թվականի մարտի 13-ից)

**Նոր դիմում ՄԻ՛ ներկայացրեք: Մի քանի դիմում ներկայացնելը կարող է դիտվել որպես հնարավոր խարդախություն և կարող է խաթարել ձեր դիմումի քննման գործընթացը:**

## Անվավեր էլփոստի հասցեներ

Հետևյալ էլփոստի հասցեները մեր համակարգում չեն ընդունվի կամ ճանաչվի՝

Էլփոստի հասցեներ, որոնք *սկսվում են* **info@**-ով
Օրինակ՝ info@mycompany.com

Էլփոստի հասցեներ, որոնք *վերջանում են* **@contact.com -ով** կամ **@noreply.com-ով**
Օրինակ՝ mycompany@contact.com
Օրինակ՝ mycompany@noreply.com

# Խորհուրդ #4. Հետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգում անցնելու խորհուրդներին

## Ի՞նչ է Persona-ն:

Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որն օգտագործվում է այս Ծրագրի համար՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար: Persona հարթակը մեզ հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և պաշտպանել այն կեղծելուց՝ անձի ինքնանկարն ավտոմատ կերպով համեմատելով նրա ID-ի դիմանկարի հետ՝ 3-կետանոց կոմպոզիտային և կենսաչափական տվյալների իսկության ստուգում կատարելով:

- Հայտատուները պետք է հաստատեն իրենց ինքնությունը Persona-ի միջոցով՝ վերբեռնելով կամ լուսանկարելով կառավարության կողմից տրված՝ լուսանկարով վավեր ID:
- Հայտատուները պետք է նաև սկանավորեն իրենց դեմքը՝ օգտագործելով դիմահայաց դիրքով տեսախցիկով սարք՝ Persona-ով ստուգում անցնելու համար:

Persona-ի հետ կապված լրացուցիչ օգնության համար այցելեք https://help.withpersona.com/for-end-users/:

## Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգում անցնելու խորհուրդներ

1. Օգտագործեք դիմահայաց դիրքով լուսանկարող սարք: Եթե դուք աշխատում եք հավելվածում նոութբուքով կամ համակարգչով, որը չունի տեսախցիկ, ձեզ կառաջարկվի տարբերակ ցանկացած պահի անցնել ստուգումը Persona-ով շարժական սարքով՝ սեղմելով «Շարունակել մեկ այլ սարքով»: Տրամադրված QR կոդը սկանավորելուց հետո կարող եք խնդրել հղում SMS-ի կամ էլնամակի միջոցով:
   - Երբ անցնեք ստուգումը Persona-ով ձեր շարժական սարքով, ավտոմատ կերպով կվերահղվեք ձեր հավելված նոութբուքում կամ համակարգչում:

2. *Նախքան* Persona-ն գործարկելը՝ նախապատրաստվեք և լուսանկարեք կառավարության կողմից տրված ձեր ID-ի երեսակողմն ու դարձերեսը:
   - Դրեք կառավարության կողմից տրված ID-ն հարթ սպիտակ մակերեսին և ապահովեք համապատասխան լուսավորություն:
   - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցոլքեր առաջացնել:

3. Նկարն անելիս բավարար լուսավորություն ապահովեք ձեր դեմքին ուղղված՝ խուսափելով հետևից վառ լույսի աղբյուրներից:
   - Կանգնեք դատարկ պատի կամ դռան առջև և խուսափեք շեղող ֆոնից:
   - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցոլքեր առաջացնել:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Խորհուրդ #4. Հետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգում անցնելու խորհուրդներին

## Քայլ 1

Սեղմեք «**Սկսել ստուգումը**», այնուհետև ընտրեք կառավարության կողմից տրված ID-ի այն տեսակը, որը ցանկանում եք օգտագործել՝ ձեր ինքնությունը հաստատելու համար:







## Քայլ 2

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **երեսակողմը** : Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»: Տե՛ս 18-րդ էջը՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար:







***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Խորհուրդ #4. Հետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներին

## Քայլ 3

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **դարձերեսը** ։ Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»։ Տես 18-րդ էջը՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար։







## Քայլ 4

Եթե օգտագործում եք **դիմահայաց դիրքով** տեսախցիկով սարք, հետևեք էկրանի հուշումներին ինքնանկար անելու համար՝ նայելով առաջ, ձախ և հետո աջ։ Տես 18-րդ էջը՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար։ Ավարտելուց հետո ընտրեք «Կատարված» և կվերահղվեք դեպի դիմումը։









Los Angeles County
HOUSEHOLD RELIEF GRANT

# Ինչպես բացել դիմում

# Որտեղ դիմել

Դիմեք այս Ծրագրի համար **www.lacountyrelieffund.com/apply** հասցեով:

Դիմումը բացելու և ներկայացնելու համար ձեզանից պահանջվում է ստեղծել հաշիվ Դիմումների պորտալի համար: Դուք կարող եք դա անել՝ սեղմելով «**Ստեղծել նոր հաշիվ**»:

Դուք կարող եք մուտք գործել Դիմումների պորտալ 24/7 ռեժիմով՝ սեղմելով «**Մուտք գործել գոյություն ունեցող հաշիվ**»:

Պորտալում դուք կկարողանաք՝
- Լրացնել ձեր դիմումը:
- Վերբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը:
- Ստուգել ձեր դիմումի կարգավիճակը:

**Մինչև 2025 թվականի մարտի 12-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով ժամը 17:00-ը թերի լրացված կամ չներկայացված դիմումները չեն դիտարկվի դրամաշնորհի համար:**
- Անպայման սեղմեք «Ներկայացնել դիմումը դիտարկման համար»՝ ձեր դիմումի ճշգրտությունը ստուգելուց հետո: Դուք կստանաք հաստատման էլնամակ, երբ ձեր դիմումը հաջողությամբ ներկայացվի:



# Ստեղծել հաշիվ Դիմումների պորտալի համար

Գրանցեք այն անձի էլփոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը, ով դիմումում նշված կլինի որպես «Հայտատու» (տե՛ս 27-րդ էջը տեղեկության համար)։ Այստեղ դուք կստանաք ձեր դիմումի վերաբերյալ կարևոր տեղեկատվություն և կարգավիճակի թարմացումներ։

Դիմումների պորտալ մուտք գործելու համար անհրաժեշտ է բազմագործոն նույնականացում։ Ամեն անգամ մուտք գործելիս ձեր գրանցած բջջային հեռախոսահամարին կուղարկվի եզակի հաստատման կոդ։ Ձեր հաշիվ մուտք գործելու համար ձեզ հարկավոր կլինի այս կոդը։



# Ընտրեք ձեր անվտանգության հարցերը Դիմումների պորտալում

Ձեզ հարկավոր կլինի ընտրել մի շարք անվտանգության հարցեր՝ պաշտպանելու և թույլ տալու համար ապակողպել ձեր հաշիվը՝ մուտք գործելու չափազանց շատ անհաջող փորձերի դեպքում:

Անվտանգության հարցերը նախատեսված են կանխելու համար ձեր պորտալի հաշիվ չթույլատրված մուտքը: Դուք կարող եք ընտրել ցանկացած հարց, որը հասանելի է բացվող ընտրացանկում, սակայն, կարևոր է ընտրել այնպիսի հարցեր և պատասխաններ, որոնք եզակի են ձեզ համար:

- Մի տրամադրեք պատասխանները ցանկացած այլ անձի:
- Գրանցեք ձեր անվտանգության հարցերի պատասխանները: Դրանք մեծատառերի նկատմամբ զգայուն են, և ձեր հաշիվն ապակողպելիս պետք է մուտքագրեք դրանք ճիշտ այնպես, ինչպես գրանցել եք:

Վերանայեք 46-րդից 50-րդ էջերը՝ հաշվի հետ կապված խնդիրների վերացման կամ ապակողպման հրահանգների համար:





Los Angeles County
HOUSEHOLD RELIEF GRANT

# Դիմումի ներկայացման գործընթացը

# Բաժին 1. Նախաորակավորում

## Նախաորակավորում

**Այս Ծրագրի համար նախաորակավորվելու նպատակով այս դիմումի հիմնական բնակության վայրը պետք է լինի տուժած գոտում:**

1. Հիմնվելով Լոս Անջելես վարչաշրջանի վնասների տեսչության (Damage Inspection, DINs)[1] տվյալների բազայի վրա՝ արդյո՞ք ձեր հիմնական բնակության վայրը տուժել է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների հետևանքով, որոնք սկսվել էին 2025 թվականի հունվարի 7-ին:

   Սեղմեք **այստեղ**՝ տեսնելու, թե արդյոք ձեր հիմնական բնակության վայրն ուղղակիորեն տուժել է Իթոնի հրդեհներից:

   Սեղմեք **այստեղ**՝ տեսնելու, թե արդյոք ձեր հիմնական բնակության վայրն ուղղակիորեն տուժել է Փալիսեյդսի հրդեհներից:*
   - Այո
   - Ոչ

2. Եթե ընտրել եք «Այո», խնդրում ենք ընտրել, թե ստորև նշվածներից որն է կիրառելի ձեր նկատմամբ.
   - Հիմնական բնակության վայրը վերջնականապես ավերվել է
   - Հիմնական բնակության վայրը անբնակելի է




[1] Վնասների տեսչությունների (Damage Inspections, DINS) տվյալների բազան օգտագործվում է անտառային հրդեհից վնասված և ավերված կառույցները փաստաթղթավորելու համար:

# Բաժին 2. Հայտատուի տվյալներ

## Հայտատուի տվյալներ

**Մենք ուղղակիորեն կապ կհաստատենք էլփոստի և հեռախոսի միջոցով այս բաժնում նշված անձի հետ՝ թարմացումներ տրամադրելու և/կամ դիմումի համար լրացուցիչ տեղեկատվություն խնդրելու համար:**

1. Հայտատուի անունը[1]

2. Հայտատուի ազգանունը[2]

3. Հայտատուի նախընտրած անունը

4. Հարկային նույնականացման համարը կամ սոցիալական ապահովության համարը[3]

5. Ծննդյան ամսաթիվը

6. Կոնտակտային տվյալները
   - Հեռախոսահամարը
   - Էլփոստը
   - Ընթացիկ փոստային հասցեն[4]
   - Տուժած հիմնական բնակության վայրի հասցեն[5]

7. Հայտատուի նախընտրած լեզուն

8. Հայտատուի կողմից SMS-ների քաղաքականության ընդունումը[6]




[1] Հայտատուի հիմնական բնակության վայրը պետք է լինի այն հասցեում, որն ուղղակիորեն տուժել է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների հետևանքով: Բնակության վայրերի ապացույցի համար անհրաժեշտ են օժանդակ փաստաթղթեր:
[2] Այս հայտատուն պետք է ապրի հիմնական բնակության վայրում: Բնակության վայրի ապացույցի համար անհրաժեշտ են օժանդակ փաստաթղթեր:
[3] Այս տեղեկատվությունը կօգտագործվի հաստատելու համար, որ հայտատուն ներառված չէ OFAC-ի ցանկում: Եթե օգնության կարիք ունեք, խնդրում ենք հեռթագրել հանդիպում Ծրագրի տեխնիկական աջակցության տրամադրողի հետ: Հարկ վճարողի անհատական նույնականացման համարի (Individual Taxpayer Identification Number, ITIN) համար դիմելու մասին ռեսուրսների համար այցելեք www.lacountyrelieffund.com/faq
[4] Ընթացիկ փոստային հասցեն այն վայրն է, որտեղ Հայտատուն ներկայումս բնակվում է:
[5] Տուժած հիմնական բնակության վայրի հասցեն այն վայրն է, որն ուղղակիորեն տուժել է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների հետևանքով:
[6] Ձեր դրամաշնորհային դիմումի կարգավիճակի թարմացումները կարող են տրամադրվել SMS-ով/տեքստային հաղորդագրությամբ. SMS-ով/տեքստային հաղորդագրությամբ թարմացումներ ստանալու համար խնդրում ենք տրամադրել համաձայնություն կից տեղեկատվության բացահայտումը կարդալուց հետո:

# Բաժին 3. Տնային տնտեսության վերաբերյալ տեղեկատվություն

## Տնային տնտեսության վերաբերյալ տեղեկատվություն

**Այս բաժնում պահանջված տեղեկատվությունը պարտադիր է տնային տնտեսության բոլոր անդամների համար:**[1]

1. Արդյո՞ք նախորդ բաժնում նշված տուժած հիմնական բնակության վայրի սեփականատեր եք կամ վարձակալում եք այն:
2. Արդյո՞ք նախկինում դիմել և/կամ ստացել եք օգնություն Լոս Անջելես վարչաշրջանի տնտեսական հնարավորությունների վարչության (Department of Economic Opportunity, DEO) օգնության հիմնադրամից:[2]
3. Տնային տնտեսության անդամների ընդհանուր թիվը
4. Տնային տնտեսության ընդհանուր տարեկան համախառն եկամուտը
5. Արդյո՞ք ունեք տեղահանված ընտանի կենդանիներ:[3]
   - Եթե այո, ապա նշեք քանակը:
   - Այլընտրանքային տնային տնտեսության հեռախոսահամար

[1] Այս Ծրագրով սահմանվում է տնային տնտեսությունը որպես «բոլոր այն մարդիկ, ովքեր զբաղեցնում են բնակարանային միավոր (օրինակ՝ տուն կամ բնակարան), որպես իրենց սովորական բնակության վայր»:
[2] https://opportunity.lacounty.gov/small-business-worker-relief-funds/
[3] Տեղահանված ընտանի կենդանին այն կենդանին է, որը անջատվել է իր տնից կամ տիրոջից այնպիսի հանգամանքների պատճառով, ինչպիսիք են բնական աղետները, դժբախտ պատահարները, արտակարգ իրավիճակները կամ անսպասելի իրադարձությունները: Այս ընտանի կենդանիները կարող են կորչել, թափառել կամ ժամանակավորապես գտնվել կացարանների, խնամատար ընտանիքների կամ փրկարար կազմակերպությունների խնամքի տակ՝ մինչ ջանքեր են գործադրվում նրանց վերամիավորելու իրենց տերերի հետ:
[4] Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհային ծրագրով սահմանվում են «տան անդամներ» որպես բոլոր այն մարդիկ, ովքեր զբաղեցնում են նույն բնակարանային միավորը, օրինակ՝ տունը կամ բնակարանը, որպես իրենց հիմնական բնակության վայր:
[5] Այս ծրագրով սահմանվում է տնային տնտեսությունը որպես «բոլոր այն մարդիկ, ովքեր զբաղեցնում են բնակարանային միավոր (օրինակ՝ տուն կամ բնակարան), որպես իրենց սովորական բնակության վայր»: Խնդրում ենք հաշվի առնել. Յուրաքանչյուր հասցեին միայն մեկ դրամաշնորհ կշնորհվի:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***


Prequalification | Applicant | Household Info | Impact Assessment | Verify Identity | Upload Documents | Bank Info

## Household Information

The information requested in this section is required for all household members. This Program defines a household as 'All the people who occupy a housing unit (such as a house or apartment) as their usual place of residence.'

Do you own or rent the impacted residence listed in the previous section? *
Select an option

Have you previously applied and/or received assistance from the Los Angeles County Department of Economic Opportunity's (DEO) relief fund? *
Select an option

Total number of household members *
Select an option

Total Annual Gross Household Income *

Do you have any displaced pets? *
Select an option

Please list all household members including the applicant listed in the previous section

First Name *

Last Name *

Date of Birth *
December | 03 | 1991

Is this household member included on the primary applicant's tax return? *
Select an option

Relationship to Applicant *
Select an option

Race *
Select an option

Ethnicity *
Select an option

Gender *
Select an option

Add additional household member

Save & Continue Later | Continue

# Բաժին 3. Տնային տնտեսության վերաբերյալ տեղեկատվություն

## Տնային տնտեսության վերաբերյալ տեղեկատվություն

**Այս բաժնում պահանջված տեղեկատվությունը պարտադիր է տնային տնտեսության <u>բոլոր</u> անդամների համար:**

1. Խնդրում ենք նշել ընտանիքի բոլոր անդամներին, այդ թվում նախորդ բաժնում նշված հայտատուին. [4]
   - Ամբողջական անունը
   - Ծննդյան ամսաթիվը
   - Հարաբերությունը հայտատուի հետ
   - Ռասան
     - Ամերիկացի հնդկացի կամ Ալյասկայի բնիկ
     - Ասիացի
     - Սև կամ աֆրոամերիկացի
     - Հավայան կամ Խաղաղօվկիանոսյան այլ կղզիների բնիկ
     - Սպիտակ
     - Այլ բազմառասայական
     - Հրաժարվել պատասխանելուց
   - Էթնիկ պատկանելությունը
     - Իսպանախոս կամ լատինոամերիկյան
     - Ոչ իսպանախոս կամ լատինոամերիկյան
     - Հրաժարվել պատասխանելուց
   - Սեռը.
     - Իգական
     - Արական
     - Տրանսգենդեր/գենդերային մասով անհամապատասխան/ոչ բինար/ինտերսեքս/երկոգի
     - Հրաժարվել պատասխանելուց
2. Ավելացնել տնային տնտեսության լրացուցիչ անդամ[5]




[4]Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհային ծրագրով սահմանվում են «տան անդամներ» որպես բոլոր այն մարդիկ, ովքեր զբաղեցնում են նույն բնակարանային միավորը, օրինակ՝ տունը կամ բնակարանը, որպես իրենց հիմնական բնակության վայր:
[5]Այս ծրագրով սահմանվում է տնային տնտեսությունը որպես «բոլոր այն մարդիկ, ովքեր զբաղեցնում են բնակարանային միավոր (օրինակ՝ տուն կամ բնակարան), որպես իրենց սովորական բնակության վայր»: Խնդրում ենք հաշվի առնել. Յուրաքանչյուր հասցեին միայն մեկ դրամաշնորհ կշնորհվի:

# Բաժին 4. Ազդեցության գնահատում

## Ազդեցության գնահատում

**Այս բաժնում գնահատվում են այն ազդեցությունները, որոնք կարող էին տեղի ունենալ հիմնական բնակության վայրի վրա՝ կապված վերջին 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների պատճառով:**

Խնդրում ենք վերանայել հետևյալ հայտարարությունները և ընտրել բոլորը, որոնք կիրառելի են յուրաքանչյուր բաժնի նկատմամբ:

**Անմիջական ռիսկ(եր) (ընտրեք բոլորը, որոնք կիրառելի են)**

- ❑ Այլընտրանքային կացարանային տարբերակների հասանելիություն չկա
- ❑ Հասարակական/մատչելի կացարանից տեղահանված

**Առողջության մասով ազդեցությունները (ընտրեք բոլորը, որոնք կիրառելի են)**

- ❑ Տնային տնտեսության անդամ(ներ)ը մահացել է(են) 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների պատճառով (եթե նշված է, կիայտնվի անունը տրամադրելու տեքստային դաշտ)
- ❑ Տնային տնտեսության անդամ(ներ)ը լուրջ վնասվածք/հիվանդություն է(են) ստացել 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների հետևանքով
- ❑ Տնային տնտեսության անդամ(ներ)ը կորցրել է(են) հիմնական բժշկական սարքավորումները/դեղորայքը 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների հետևանքով

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



## Ազդեցության գնահատում
## *(շարունակություն)*

### Բնակչության խոցելի շերտերի ցուցիչներ (ընտրեք բոլորը, որոնք կիրառելի են)

- ❑ Տնային տնտեսության անդամ(ներ)՝ հաշմանդամությամբ/առողջության հատուկ կարիքներով
  - ○ Տնային տնտեսության անդամների թիվը
- ❑ 18 տարեկանից փոքր երեխաներ տնային տնտեսությունում
- ❑ Տնային տնտեսությունում չափահաս խնամարկյալ(ներ)
- ❑ 60 տարեկանից բարձր տարիքի տնային տնտեսության անդամ(ներ)
- ❑ Խնամարկյալ երիտասարդներ կամ անցումային տարիքի երիտասարդներ
- ❑ Երեխայի խնամքի/խնամարկյալի խնամքի կազմակերպման խախտում[1]

### Ֆինանսական սթրեսի ցուցիչներ (ընտրեք բոլորը, որոնք կիրառելի են)

- ❑ Տան սեփականատիրոջ/վարձակալի ապահովագրություն չկա
- ❑ Աշխատանքի կամ բիզնեսի համար անհրաժեշտ սարքավորումների/գործիքների կորուստ
- ❑ Կորած առաջնային փոխադրամիջոց
- ❑ Կորցրած եկամուտ, զբաղվածություն և/կամ տնային բիզնես՝ 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի հրդեհների և փոթորիկների հետևանքով
- ❑ Տնային տնտեսությունն իրավասու է կամ ունի որոշակի պետական նպաստի իրավասության պահանջներին բավարարող տնային տնտեսության եկամտի մակարդակ




[1] Երեխայի խնամքի/խնամարկյալի խնամքի կազմակերպման խախտումը վերաբերում է այնպիսի իրավիճակներին, երբ երեխայի, տարեց անձի կամ խնամարկյալ անձի կանոնավոր խնամքն անսպասելիորեն ընդհատվում է: Դա կարող է առաջանալ արտակարգ իրավիճակների, խնամողի անհասանելիության, դպրոցների կամ մանկապարտեզների փակման, բնական աղետների կամ այլ չնախատեսված հանգամանքների պատճառով, որոնք կարող են ազդել խնամարկյալի բարեկեցության և խնամողի կարողության վրա՝ կատարել աշխատանքային կամ անձնական պարտականությունները:

# Բաժին 5. Persona-ի ID-ի ստուգում

## Persona և ID-ի ստուգում

**Այս բաժնում դուք պետք է հաստատեք ձեր ինքնությունը՝ օգտագործելով Persona հարթակը՝ վերբեռնելով կամ լուսանկարելով կառավարության կողմից տրված վավեր ID-ն:**

Կառավարության կողմից տրված ID-ի ընդունելի ձևերի մեջ մտնում են՝

- Վարորդական վկայական
- Նահանգային ID կամ այլ պետության կառավարության կողմից տրված նույնականացման քարտ
- ԱՄՆ անձնագիր կամ օտարերկրյա անձնագիր
- Ցեղային ID

Դուք նաև պետք է սկանավորեք ձեր դեմքը դիմահայաց դիրքով տեսախցիկով սարքում: Վերանայեք 18-19 սլայդերը՝ Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու լավագույն փորձի համար:

## Ի՞նչ է Persona-ն

Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որից օգտվում է Ադմինիստրատորը և Lendistry-ն՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար: Persona հարթակը Ադմինիստրատորին և Lendistry-ին հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և պաշտպանել այն կեղծելուց՝ անձի ինքնանկարն ավտոմատ կերպով համեմատելով նրա ID-ի դիմանկարի հետ՝ 3-կետանոց կոմպոզիտային և կենսաչափական տվյալների իսկության ստուգում կատարելով:



# Բաժին 6. Փաստաթղթեր

## Փաստաթղթեր

**Վերբեռնեք լրացված Հայտատուի հավաստագրերը և ձեր դիմումի ցանկացած օժանդակ փաստաթուղթ: Լրացուցիչ փաստաթղթեր չեն պահանջվում, եթե հիմնական բնակության վայրի և տնային տնտեսության խնամարկյալների հասցեն ճշգրտորեն արտացոլված են հայտատուի վերջին ներկայացրած հարկային հայտարարագրերում:**

### Քայլ 1

Ընտրեք վերբեռնման պատկերակը՝ ձեր սարքում փաստաթղթի ֆայլը տեղադրելու համար, կամ ֆայլը քաշեք-գցեք պատկերակի մեջ:

### Քայլ 2

Եթե ձեր ֆայլը դիտելու համար պահանջվում է գաղտնաբառ, սեղմեք երեք կետերին՝ ⋮ և ընտրեք **«Սահմանել գաղտնաբառ»**՝ գաղտնաբառը մուտքագրելու համար: Դուք նաև կարող եք սեղմել երեք կետերին՝ ֆայլը դիտելու, փոխելու կամ ջնջելու համար:

### Քայլ 3

Երբ ձեր ֆայլը վերբեռնվի, դրա կարգավիճակը կփոխվի **ՊԱՀԱՆՋՎՈՂ**-ից **ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ** կարգավիճակի:

### Քայլ 4

Կրկնեք վերոնշյալ քայլերը՝ մինչև որ բոլոր պահանջվող փաստաթղթերը վերբեռնվեն:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



## Բանկային տվյալներ

**Մենք պետք է ստուգենք ձեր բանկային տվյալները: Plaid-ը այդ տեղեկատվությունը տրամադրելու արագ, անխափան և անվտանգ միջոց է: Այն ազատում է փաստաթղթերը սկանավորելու և վերբեռնելու անհրաժեշտությունից՝ հեշտացնելով ձեր խնդիրը և մեզ հնարավորություն տալով ավելի արագ որոշումը տրամադրել:**

### Ինչո՞ւ են հարկավոր ձեր բանկային տվյալները:

Lendistry-ն օգտագործում է Plaid, երրորդ կողմի տեխնոլոգիական ծառայություն տրամադրող՝ ձեր բանկային հաշիվը հաստատելու և ACH վճարային համակարգով փոխանցումներ կատարելու համար՝ կապակցելով ԱՄՆ-ի ցանկացած բանկի կամ վարկային միության հաշիվները Դիմումների պորտալի նման հավելվածին: **Plaid-ն օգտագործում է գաղտնագրում և այլ անվտանգության միջոցներ՝ պաշտպանելու համար ձեր տվյալները, չի կիսվում ձեր անձնական տվյալներով առանց ձեր թույլտվության և չի վաճառում կամ վարձակալության տալիս դրանք չարտոնված երրորդ անձանց՝ առանց ձեր համաձայնության:**

Բանկային տվյալների ստացման այս եղանակը նախընտրելի է, բայց միշտ չէ, որ աշխատում է, եթե ձեր բանկային հաստատությունը հասանելի չէ մատակարարի միջոցով: Եթե հայտատուն չունի առցանց բանկինգի կարգավորում կամ նրա բանկային հաշիվը չի կարող ստուգվել Plaid-ով, ապա դուք կարող եք ձեռքով մուտքագրել ձեր հաշվի տվյալները: Տես 38-րդ էջը:

**Կարևոր նշում. Բանկային հաշիվը պետք է գրանցված լինի դիմումում նշված հայտատուի անունով:**

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



# Բաժին 7. Բանկային տվյալներ՝ Plaid

1




Անցեք Plaid:

2




Եթե ունեք գոյություն ունեցող Plaid հաշիվ, մուտքագրեք այն համարը, որը գրանցել եք դրանում: Եթե չունեք հաշիվ, շարունակեք որպես հյուր:

3




Ընտրեք ձեր բանկային հաստատությունը:

4




Շարունակեք մուտք գործել ձեր հաշիվ:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Բաժին 7. Բանկային տվյալներ՝ Plaid

5




Մուտք գործեք ձեր բանկային հաստատություն:

6




Հաստատեք ձեր ինքնությունը:

7




Ընտրեք այն հաշիվը, որը ցանկանում եք ստանալ դրամաշնորհային միջոցներ ACH-ի միջոցով

8




Կարդացեք Plaid-ի պայմաններն ու դրույթները, այնուհետև միացրեք ձեր հաշվի տվյալները Դիմումների պորտալին

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Բաժին 7. Բանկային տվյալներ՝ Plaid

9




Վերանայեք և հաստատեք տվյալների այն տեսակը, որը տրամադրում եք։

10




Մուտքագրեք ձեր բջջային համարը, եթե ցանկանում եք պահպանել ձեր հաշիվը Plaid-ում։ Հակառակ դեպքում՝ ավարտեք առանց պահպանելու։

***Շարունակությունը՝ հաջորդ էջում։***

# Բաժին 7. Բանկային տվյալներ՝ այլընտրանքային եղանակ

## Այլընտրանքային եղանակ բանկային տվյալների մուտքագրման համար

Եթե հայտատուն չունի առցանց բանկինգի կարգավորում կամ նրա բանկային հաշիվը չի կարող ստուգվել Plaid-ով, ապա դուք կարող եք ձեռքով մուտքագրել ձեր հաշվի տվյալները։ Դա անելու համար դուք պետք է վերբեռնեք ձեր երկու վերջին բանկային քաղվածքը Դիմումների պորտալում՝ հաշվի վերաբերյալ ֆինանսական տեղեկատվության հետ միասին։

Դուք կարող եք գտնել ձեր հաշվեհամարը և երթուղային համարը չեկի ստորին հատվածում։ Երթուղային համարը թվերի առաջին կազմն է, իսկ հաշվեհամարը թվերի երկրորդ կազմն է։

Եթե դուք չունեք ֆիզիկական չեկ, ֆինանսական հաստատությունների մեծ մասը տրամադրում է հաշիվը և երթուղային համարները հաշվի տվյալների տակ։ Կապվեք ձեր ֆինանսական հաստատության հետ՝ օգնելու գտնել այս համարները։



# Բաժին 8. Դիմումի դիտարկում

## Դիմումի դիտարկում

Խնդրում ենք վերանայել ձեր դիմումը՝ նախքան ներկայացնելը՝ համոզվելու համար, որ բոլոր պատասխանները ճշգրիտ են: **Ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք այլևս ՉԵՔ կարողանա այն խմբագրել:**

1. Խմբագրելու համար ձեր պատասխանները, սեղմեք «**Ես որոշ բաներ պետք է խմբագրեմ**»:
2. Նշեք վանդակը՝ հաստատելու և թույլատրելու համար հետևյալը.
   - Նշելով այս վանդակը՝ դուք համաձայնում եք այս պայմաններին և դրույթներին:
3. Մուտքագրեք ձեր էլեկտրոնային ստորագրությունը (իրավական անունն ու ազգանունը)՝ վերը նշված ձեր թույլտվությանը համաձայնություն տալու համար:
4. Եթե ձեզ հարկավոր է ավելի շատ ժամանակ՝ ձեր դիմումը վերանայելու կամ լրացնելու համար, սեղմեք «**Պահպանել և շարունակել ավելի ուշ**» կոճակը:
5. Եթե ձեր դիմումը պատրաստ է ներկայացման համար, սեղմեք «**Ներկայացնել դիմումը դիտարկման համար**»:

Դուք պետք է ներկայացնեք ձեր դիմումը մինչև **2025 թվականի մարտի 12-ը, ժ. 17:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով**: Մինչև վերջնաժամկետը թերի լրացված կամ չներկայացված դիմումները՝ ներառյալ պահանջվող փաստաթղթերը, **չեն** դիտարկվի դրամաշնորհի համար:



# Դիմումի ներկայացում

Դուք կստանաք հաստատման էլնամակ noreply@lendistry.com հասցեից՝ հաստատելու համար, որ ձեր դիմումը հաջողությամբ ներկայացվել է:

Եթե ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք հաստատման էլնամակ չեք ստանում.

- Ստուգեք ձեր սպամի պանակը՝ noreply@lendistry.com հասցեից էլնամակ գտնելու համար, և այդ էլփոստի հասցեն ավելացրեք ձեր էլփոստի հաշվի անվտանգ ուղարկողների ցանկում:
- Մուտք գործեք Դիմումների պորտալ և անպայման սեղմեք «Ներկայացնել դիմումը դիտարկման համար» (տես 40-րդ էջը տեղեկության համար):

Lendistry-ն կարող է կապվել ձեզ հետ էլփոստի կամ հեռախոսի միջոցով, եթե հարկավոր են լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր՝ ձեր դիմումը դիտարկելու համար:

**Դուք պետք է պատասխանեք բոլոր հարցումներին, որպեսզի ձեր դիմումը մնա քննարկման գործընթացում:**


Lendistry <noreply@lendistry.com>
Wednesday, December 21, 2022 11:53:56 AM
Show pictures

Los Angeles County HOUSEHOLD RELIEF GRANT

Hi Richard,

Welcome to Application Portal for the LA County Household Relief Grant Program, administered by the Los Angeles County Department of Consumer and Business Affairs (DCBA).

In the Portal, you will be able to:

- Complete your application.
- Upload required documents.
- Check the status of your application.

Sign in to Application Portal

You can access Application Portal at:
https://lacountyrelieffund.mylendistry.com/auth/sign-in

Before you start, please read the information below closely:

- To be reviewed, you must submit your application by **5:00pm PT on March 12, 2025**. Incomplete applications will not be considered. *Please make sure you click "Submit." You will receive a confirmation email once your application has been successfully submitted.*
- **Funding for the LA County Household Relief Grant Program is limited.** It is possible that the number of applicants that meet the eligibility requirements will exceed the available funds. Submitting an application, meeting the eligibility requirements, and/or being approved does not guarantee that you will receive funding.

The Lendistry Customer Experience Center is here to answer any questions at 888-788-0335. Please refer to the below for hours of operation:

- Sunday - Saturday, 7:00 a.m. PT - 7:00 p.m. PT (February 26 - March 12)
- Monday - Friday 8:00 a.m. PT - 5:00 p.m. PT (starting March 13)

**Important Note: Funding for this Program is limited. Submitting an application and/or being fully validated does not guarantee you will receive a grant award. It is possible that the number of applicants that meet the eligibility requirements will exceed the available funds.**

Thank you,
Los Angeles County Household Relief Grant



Los Angeles County
HOUSEHOLD RELIEF GRANT

# Դիտարկման գործընթացը

# Դիտարկման գործընթաց

**Ինչպե՞ս կիմանամ, որ ինձ դրամաշնորհ են տրամադրել:**

Այս ծրագրի համար դիմելու գործընթացն ունի վավերացման մի քանի փուլ: Դրամաշնորհը ստանալու համար առաջին հերթին դուք պետք է համապատասխանեք ծրագրին դիմելու իրավունակության նվազագույն պահանջներին:

Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության ֆոնդի դրամաշնորհը կարող է փորձել կապվել հայտատուի հետ մի քանի անգամ էլփոստի և/կամ հեռախոսի միջոցով, եթե լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր են անհրաժեշտ՝ նրա դիմումը վավերացնելու համար: Հայտատուն կարող է մերժում ստանալ, եթե նման հարցումները չկատարվեն:

**Երբ որոշեք, որ իրավասու եք այս Ծրագրին մասնակցելու համար, ձեր դիմումը կանցնի վերջնական վավերացման փուլ, որի ընթացքում վավերացվում է ձեր տրամադրած տեղեկատվության և փաստաթղթերի ճշգրտությունն ու ճշմարտացիությունը:**

**Կարևոր նշում.** Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորումը սահմանափակ է: Հնարավոր է, որ իրավասության պահանջները բավարարող հայտատուների թիվը գերազանցի հասանելի միջոցները: **Դիմում ներկայացնելը, իրավունակության պահանջները բավարարելը և/կամ հաստատման ստացումը չի երաշխավորում, որ դուք կստանաք ֆինանսավորում:**

Ձեր դիմումն ամբողջովին վավերացնելուց հետո դուք էլնամակ կստանաք, որով ձեզ կտեղեկացվի, որ ձեր ֆինանսավորումը հաստատվել կամ մերժվել է:

**Ինչպե՞ս կարող եմ ստուգել իմ դիմումի կարգավիճակը:**

Դուք ցանկացած պահի կարող եք ստուգել ձեր դիմումի կարգավիճակը՝ մուտք գործելով Դիմումների պորտալ՝ օգտագործելով ձեր գրանցած օգտանունը, գաղտնաբառը և բջջային համարը: Մուտք գործելուց հետո կարգավիճակը կհայտնվի կառավարման վահանակին:

**Մուտք գործեք Դիմումների պորտալ այստեղ՝**
https://lacountyrelieffund.mylendistry.com/auth/sign-in

**Իմ փաստաթղթերը և բանկային տվյալներն ամբողջովին վավերացվել են, և ինձ հաստատել են ֆինանսավորման համար: Ե՞րբ ես կստանամ ֆինանսավորում:**

Երբ ձեր դիմումն ամբողջովին վավերացվի և հաստատվի դրամաշնորհային ֆինանսավորման համար, ձեր դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9 ձևը հասանելի կդառնան ձեզ՝ **DocuSign-ի փաստաթղթի** տեսքով Դիմումների պորտալում: Մուտք գործեք և հետևեք DocuSign-ի ցուցումներին՝ երկու փաստաթղթերում ձեր անվան սկզբնատառերը, ստորագրությունը և ամսաթիվը դնելու համար:

**Մուտք գործեք Դիմումների պորտալ այստեղ՝**
https://lacountyrelieffund.mylendistry.com/auth/sign-in

**Կարևոր նշում. Ձեր միջոցները ձեզ չեն տրամադրվի այնքան ժամանակ, քանի դեռ չի ստորագրվել դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9-ը: Դրամաշնորհառուները, ովքեր չեն ստորագրել այս երկու փաստաթղթերը, կարող են զրկվել իրենց դրամաշնորհից, համաձայնագիրը կարող է չեղարկվել, և/կամ դիմումը Ծրագրի կողմից կարող է մերժվել:**

# Դիմումի կարգավիճակ

| Կարգավիճակ | Ի՞նչ է դա նշանակում | Հայտատուից պահանջվող գործողություն |
|---|---|---|
| *Թերի է լրացված* | Ձեր դիմումը թերի է լրացված կամ չի ներկայացվել: | Ներկայացրեք ձեր դիմումը մինչև **2025 թվականի մարտի 12-ը, ժ. 17:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով**: Թերի լրացված կամ չներկայացված դիմումները չեն ուսումնասիրվի և չեն դիտարկվի դրամաշնորհի համար: Դուք կստանաք հաստատման էլնամակ, եթե ձեր դիմումը ներկայացվել է: |
| *Դիմումը ներկայացվել է* | Դուք հաջողությամբ ներկայացրել եք ձեր դիմումը: Ստուգեք ձեր էլփոստը՝ հաստատման համար: Եթե չեք ստանում այս էլնամակը, կապ հաստատեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհը կկապվի հայտատուի հետ, երբ որոշվի՝ արդյոք նա իրավասու է դրամաշնորհ ստանալու համար, թե՝ ոչ: |
| *Դիմումը ներկայացվել է, սակայն պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր:* | Դուք դիմում եք ներկայացրել, սակայն ձեր տրամադրած տեղեկատվությունը վավերացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: | Մուտք գործեք Դիմումների պորտալ և վերբեռնեք պահանջված տեղեկատվությունը և/կամ փաստաթղթերը: Ձեր դիմումին չի կարող ընթացք տրվել, քանի դեռ այն չի լրացվել: |
| *Դիմումը վերանայվում է՝ ծրագրին մասնակցելու նվազագույն պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար:* | Ձեր դիմումին և փաստաթղթերի վերանայմանը ընթացք է տրվել: Ձեր դիմումն այժմ վերանայվում է՝ ծրագրի պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհը կկապվի հայտատուի հետ, երբ որոշվի՝ արդյոք նա իրավասու է դրամաշնորհ ստանալու համար, թե՝ ոչ: |
| *Ձեր դիմումը ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ, քանի որ չի համապատասխանում ծրագրի նվազագույն պահանջներին:* | Ձեր դիմումը չի համապատասխանում Ծրագրի նվազագույն պահանջներին և չի դիտարկվի դրամաշնորհի տրամադրման համար: | Հայտատուները էլփոստով ծանուցում կստանան, եթե չհամապատասխանեն այս դրամաշնորհային Ծրագրից օգտվելու պահանջներին: Եթե դիմումում հայտատուի կողմից ներկայացված տեղեկատվության և/կամ փաստաթղթերի մեջ սխալ է եղել, կապվեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ այս էլնամակը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Խնդրում ենք հաշվի առնել, որ սա չի երաշխավորի իրավասությունը: Դիմումի հետագա վավերացման համար կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: Եթե այս ժամանակաշրջանի ընթացքում մենք չստանանք նամակ հայտատուից, նրա դիմումը կմնա ոչ իրավասու, իսկ գործը կփակվի: |
| *Ձեր դիմումը բավարարում է Ծրագրին մասնակցելու նվազագույն պահանջները և կանցնի վավերացման հաջորդ փուլ:* | Ձեր դիմումը բավարարում է ծրագրին մասնակցելու նվազագույն պահանջները և կանցնի վավերացում որոշելու համար՝ ձեզ հաստատո՞ւմ, թե՞ մերժում են դրամաշնորհ տրամադրել: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհը կկապվի հայտատուի հետ միայն այն դեպքում, երբ նրա դիմումը վավերացնելու համար պահանջվի լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: |

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Դիմումի կարգավիճակ

| Կարգավիճակ | Ի՞նչ է դա նշանակում | Հայտատուից պահանջվող գործողություն |
|---|---|---|
| *Պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր, որպեսզի ձեր դիմումն անցնի վավերացման փուլ:* | Ձեր դիմումն ամբողջությամբ վավերացնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ: | Վերբեռնեք բոլոր պահանջվող տեղեկությունները և/կամ փաստաթղթերը Դիմումների պորտալում: Դիմումները չեն վավերացվի՝ մինչև որ բոլոր պահանջները չկատարվեն: |
| *Դիմումը մերժվել է* | Դրամաշնորհի տրամադրման ձեր դիմումը մերժվել է: | Հայտատուները էլփոստով ծանուցում կստանան, եթե չհամապատասխանեն այս դրամաշնորհային Ծրագրից օգտվելու պահանջներին: Եթե դիմումում հայտատուի կողմից ներկայացված տեղեկատվության և/կամ փաստաթղթ(եր)ի մեջ սխալ է եղել, կապվեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ այս էլնամակը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Խնդրում ենք հաշվի առնել, որ սա չի երաշխավորի իրավասությունը: Դիմումի հետագա վավերացման համար կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: Եթե այս ժամանակաշրջանի ընթացքում մենք չստանանք նամակ հայտատուից, նրա դիմումը կմնա մերժված, իսկ գործը կփակվի: |
| *Դիմումը հաստատվել է* | Դրամաշնորհի տրամադրման ձեր դիմումը հաստատվել է: | Եթե հայտատուն հաստատվի ֆինանսավորման համար, նրա դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9-ը հասանելի կլինեն որպես DocuSign փաստաթուղթ Դիմումների պորտալում: Հաստատված հայտատուները պետք է հետևեն DocuSign-ի հրահանգներին՝ երկու փաստաթղթերում անվան սկզբնատառերը, ստորագրությունը և ամսաթիվը դնելու համար: |
| *Դիմումը հաստատվել է, դրամաշնորհի ստացման փաստաթղթերն ուսումնասիրվում են* | Ձեր դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9 ձևը հասանելի են DocuSign-ի փաստաթղթի տեսքով Դիմումների պորտալում: | Մուտք գործեք Դիմումների պորտալ և հետևեք DocuSign-ի ցուցումներին՝ երկու փաստաթղթերում ձեր անվան սկզբնատառերը, ստորագրությունը և ամսաթիվը դնելու համար: Կարևոր նշում. Ձեր միջոցները ձեզ չեն տրամադրվի այնքան ժամանակ, քանի դեռ չի ստորագրվել դրամաշնորհառուի համաձայնագիրը: Դրամաշնորհառուները, ովքեր չեն ստորագրել իրենց դրամաշնորհառուի համաձայնագիրը, կարող են զրկվել իրենց դրամաշնորհից, համաձայնագիրը կարող է չեղարկվել, և/կամ դիմումը Ծրագրի կողմից կարող է մերժվել: |
| *Դրամաշնորհի փաստաթղթերը ստացվել են* | Մենք ստացել ենք ձեր ամբողջությամբ ձևակերպված դրամաշնորհառուի համաձայնագիրը: Ձեր բանկային տվյալները կանցնեն վերջին վավերացումը՝ նախքան ֆինանսավորելը: Դուք կստանաք դրամական միջոցները ACH-ի միջոցով: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Լոս Անջելես վարչաշրջանի տնային տնտեսությունների օգնության դրամաշնորհը ձեզ հետ կապ կհաստատի միայն այն դեպքում, երբ ձեր բանկային հաշվին ACH փոխանցումը կարգավորելու հետ կապված խնդիրներ լինեն: |
| *Դրամաշնորհի ֆինանսավորումը կատարվել է* | Ձեզ տրամադրվել է դրամաշնորհի ամբողջական ֆինանսավորումը, որի համապատասխանության պահանջները բավարարել եք: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Նրա գործն այժմ փակված է: |



Los Angeles County
HOUSEHOLD RELIEF GRANT

# Ինչպես վերացնել ձեր հաշվի հետ կապված խնդիրները

# Էլփոստի հասցեն հնարավոր չէ գտնել

## Ի՞նչ է պետք անել, եթե ձեր էլփոստի հասցեն հնարավոր չէ գտնել Դիմումների պորտալում

Եթե ձեր էլփոստի հասցեն հնարավոր չէ գտնել Դիմումների պորտալում, հնարավոր է՝ դուք չունեք հաշիվ կամ օգտագործում եք սխալ էլփոստի հասցե մուտք գործելու համար։

1. Դիմում բացելու համար ձեզանից պահանջվում է ստեղծել հաշիվ Դիմումների պորտալում՝ գրանցելով վավերական էլփոստի հասցե և բջջային հեռախոսահամար (տե՛ս 23-րդ էջը տեղեկության համար)։ Եթե դուք հաշիվ չեք ստեղծել, խնդրում ենք ստեղծել այն՝ սեղմելով **«Չունե՞ք հաշիվ։ Գրանցվե՛ք։»**։

2. Եթե դուք արդեն ունեք հաշիվ, սակայն ձեր էլփոստի հասցեն հնարավոր չէ գտնել, հնարավոր է՝ դուք օգտագործել եք սխալ էլփոստի հասցե՝ մուտք գործելու համար։ Խնդրում ենք համոզվել, որ այն ճիշտ եք մուտքագրել։ Եթե այս խնդիրը շարունակվի, խնդրում ենք կապվել մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ **888-788-0335** հեռախոսահամարով։

   Ձեր էլ. հասցեն մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնից ստանալու համար ձեզանից կարող է պահանջվել հաստատել որոշակի տեղեկատվություն, որը կարող է ներառել, առանց սահմանափակման, ձեր ամբողջական անունը, ծննդյան ամսաթիվը և սոցիալական ապահովության համարի կամ հարկային նույնականացման համարի վերջին չորս թվանշանը։




*Շարունակությունը՝ հաջորդ էջում։*

# Սխալ գաղտնաբառ

## Ի՞նչ անել, եթե գաղտնաբառը սխալ է

Եթե ձեր մուտքագրած գաղտնաբառը սխալ է, ստուգեք ուղղագրությունը և կրկին փորձեք: Դուք ունեք գաղտնաբառի մուտքագրման հինգ փորձ՝ նախքան ձեր հաշիվը կկողպվի:

**Մենք խստորեն խորհուրդ ենք տալիս երկրորդ անհաջող փորձից հետո անմիջապես վերադնել ձեր գաղտնաբառը:**

**Ինչպես վերադնել գաղտնաբառը.**

1. Սեղմեք «Մոռացե՞լ եք ձեր գաղտնաբառը»:
2. Մուտքագրեք ձեր հաշվում գրանցված էլփոստի հասցեն:
3. Ձեր գրանցած բջջային հեռախոսահամարին կուղարկվի վեցանիշ հաստատման կոդ: Մուտքագրեք կոդը՝ ձեր հաշիվը հաստատելու համար:
4. Մուտք գործեք և հաստատեք ձեր նոր գաղտնաբառը:




***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Ձեր հաշիվը կողպված է

## Ի՞նչ է պետք անել, եթե ձեր հաշիվը կողպված է

Ձեր հաշիվը կկողպվի մուտք գործելու հինգ անհաջող փորձից հետո: Դուք կարող եք ապակողպել ձեր հաշիվը՝ պատասխանելով ձեր անվտանգության հարցերին:

## Ինչպես ապակողպել հաշիվը

1. Ընտրեք «Սեղմել այստեղ՝ հաշիվն ապակողպելու համար»:

2. Մուտքագրեք ձեր հաշվում գրանցված անունը, ազգանունը, էլփոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը: Որպեսզի կարողանաք շարունակել, այս տեղեկատվությունը պետք է ճիշտ մուտքագրված լինի: Եթե ձեր հաշվի տվյալները ստուգելու հետ կապված օգնության կարիք ունեք, կապ հաստատեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ **888-788-0335** հեռախոսահամարով:

3. Ձեր գրանցած բջջային հեռախոսահամարին կուղարկվի վեցանիշ հաստատման կոդ: Մուտքագրեք կոդը՝ ձեր հաշիվը հաստատելու համար:

4. Ճիշտ պատասխանեք անվտանգության հարցերին՝ ապակողպելու համար ձեր հաշիվը: Եթե չեք կարող ճիշտ պատասխաններ տալ, կապ հաստատեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ ձեր անվտանգության հարցերը վերակայելու համար:

   Անվտանգության հարցերը վերակայելու համար ձեզանից կարող է պահանջվել հաստատել որոշակի տեղեկատվություն, որը կարող է ներառել, առանց սահմանափակման, ձեր ամբողջական անունը, ծննդյան ամսաթիվը և սոցիալական ապահովության համարի կամ հարկային նույնականացման համարի վերջին չորս թվանշանը:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



# Ձեր հաշիվը կողպված է

**Ինչպես ապակողպել հաշիվը**

5. Անվտանգության հարցերին ճիշտ պատասխանելուց հետո ձեր էլփոստին կուղարկվի հաշիվն ապակողպելու հղում:

6. Սեղմեք հղումը՝ ապակողպելու համար ձեր հաշիվը:

7. Ձեր հաշիվն ապակողպելուց հետո դուք կունենաք հնարավորություն մուտք գործել Դիմումների պորտալ՝ օգտագործելով ձեր գոյություն ունեցող գաղտնաբառը կամ վերակայել այն: Խորհուրդ ենք տալիս վերակայել ձեր գաղտնաբառը՝ ձեր հաշիվն ապակողպելուց հետո:










***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



**Արագ հղումներ**

Ծրագրի համառոտ նկարագրություն
Պահանջվող փաստաթղթեր
Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերը
Դիմումը ներկայացնելու խորհուրդներ
Ինչպես բացել դիմում
Դիմումի ներկայացման գործընթացը
Ստուգման գործընթացը
Ինչպես վերացնել ձեր հաշվի հետ կապված խնդիրները

# Los Angeles County HOUSEHOLD RELIEF GRANT

## Հաճախորդների սպասարկման կենտրոն

**888-788-0335**
Շաբաթը յոթ (7) օր,
7:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով - 19:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով
(միայն 2025 թվականի փետրվարի 26-ից մարտի 12-ը)

Երկուշաբթի – ուրբաթ
8:00 - 17:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով
(սկսած 2025 թվականի մարտի 13-ից և դրանից հետո)

*Փակ է բոլոր դաշնային տոներին:*

the Center by Lendistry